



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
Հ Ր Ա Մ Ա Ն

23 *September* 2011թ.

N 683 -Ա

ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 27-Ի
N1-06/491-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 4-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» N1005-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության 18-րդ կետը.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ '

1. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2008 թվականի նոյեմբերի 27-ի «Հարկ վճարողի հաշվառումը մեկ հարկային տեսչությունից մեկ այլ հարկային տեսչություն տեղափոխելու մասին» N1-06/491-Ա հրամանով հաստատված կարգի 6-րդ կետի երրորդ պարբերությունը, 9-րդ և 10-րդ կետերը, կարգով հաստատված Ձև 2 «Հարկ վճարողի տեղափոխման հետ կապված տվյալներ»-ի 3-րդ կետը,

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Նախագահ

Գ. Խաչատրյան